ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ և 1.17-րդ կետերի դրույթներով.

կարգադրում եմ՝

1.Մարզում հումանիտար և գնումներով ձեռք բերված դեղորայքի բաշխման գործընթացի նկատմամբ վերահսկողություն իրականացնելու համար ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով՝

Այվազյան Մ.-----Մարզպետարանի աշխատակազմի ԱՍԱ վարչության առողջապահության բաժնի վարիչ, նախագահ

Ղալակչյան Հ.-----Մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության հաշվապահական հաշվառման գլխավոր մասնագետ

Սահակյան Դ.-----Մարզպետի տեղակալի օգնական

2. Հանձնաժողովին՝ ուսումնասիրության արդյունքները 20-օրյա ժամկետում ներկայացնել մարզպետարան:

3. Սույն կարգադրության կատարման հսկողությունը վերապահել մարզպետի տեղակալ Ա.Ղուկասյանին:

4.Սույն կարգադրությունը ուժի մեջ է ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ **Ռ.ԳՐԻԳՈՐՅԱՆ**